

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ողորմեցէ՛ք ձեզի, ո՛վ քրիստոնեաներ, եւ մի՛ մնաք մեղքի մէջ: Մեղաւորը կը նմանի հիւանդի, որ եթէ ծածկէ իր ցաւը եւ չխոստովանի բժիշկին, հիւանդութեան դեղ չի գտներ: Նոյնպէս քահանան, հոգիներու բժիշկ է: Ան որ ծածկէ իր մեղքերը եւ չխոստովանի, յաւիտենական մահով կը մեռնի:

Մեղանչողը այնքան ատեն, որ ողջ է սատանային բերանը կը գտնուի: Երբ խոստովանի մեղքը, կը փրկուի անոր բերանէն. իսկ եթէ մեղքով մեռնի կը մտնէ սատանային փորը, որ դժոխքն է: Մարդ երբ մեղք կը գործէ եւ չխոստովանիր, մահ եւ կորուստ կը պատճառէ հոգիին, ինչպէս օձին եւ կարիճին խայթոցը պատիկ է, բայց դառն կսկիծ եւ մահ կը պատճառէ:

Արդ, խոստովանեցէ՛ք, որովհետեւ անիկա է մեղանչողներուն դեղն ու բժշկութիւնը: Ան որ չխոստովանի եւ մեղքով մեռնի, յետ մահու ոչ մէկ հնար եւ փրկութեան յոյս կայ: Այնքան ժամանակ որ մարմինով կ'ապրինք այս աշխարհին մէջ, հոս է մեղանչողներուն փրկութեան յոյսը: Ոմանք կը վախնան, մի գուցէ քահանան կը հրապարակէ իրենց խոստովանութիւնը: Ասոր համար Ս. Ներսէս կանոն դրած է, որ «Քահանան եթէ ապաշխարողի մը խոստովանութեան ու ապաշխարանքի խօսքեր յայտնէ, նզովուի եւ կարգալոյծ ըլլայ» (Կանոն ԺԹ.):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶԵԿԱՅԻ

Ի՞նչ կը նշանակէ «Մեր կեանքը յանձնել Քրիստոսի»

Քրիստոս գերիներ չի փնտրեր, ընդհակառակը, մեղքի ու մահուան գերութենէն ազատիլ ուզող հոգիներ կը փնտռէ: Ուստի, «Մեր կեանքը յանձնել Քրիստոսի», երբեք չի նշանակեր բռնակալ Սատանայէն ազատիլ, իյնալու համար ուրիշ բռնակալի մը՝ Քրիստոսի ձեռքը: Քրիստոս բռնակալ չէ: Քրիստոս ազատարարն է մարդկութեան: Բռնակալը Սատանան ու աշխարհն է, որոնք կը ստիպեն մեզի ընելու իրենց կամքն ու փափաքները, իսկ Քրիստոս, երբեք չստիպեր մեզի ընելու իր կամքը եւ կամ որեւէ բան: Ան կը յարգէ մեր «ազատ կամքով» ստեղծուած ըլլալու հանգամանքը: Սատանան մեր կեանքը խլող ու թունաւորող մըն է, իսկ Քրիստոս՝ մեր կեանքը խնայող ու փաղցրացնող մըն է:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒՄՍԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Կդ. 2.8-15:
ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 2.21

Ութը օր ետք, երբ նանուկը թլփատելու ժամանակը հասաւ, Յիսուս կոչեցին զայնայն անունով, որ հրեշտակը տուած էր անոր՝ տակաւին Մարիամի որովայնին մէջ չլղացած:

ՊՕՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՍԱԿԸ
ԿՈՂՈՍԱՅԻՆԵՐՈՒՆ
2.8-15

Զգոյշ եղէք, որ ռեւէ մէկը ձեր միտքը չգրաւէ իմաստասիրական տեսութիւններով եւ խաբեբայական սին խօսքերով, որոնք մարդկային ասանդութիւններու եւ բնութեան ոյժերուն վրայ կը հիմնուին եւ ո՛չ թէ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ: Որովհետեւ մարդացած Քրիստոսի մէջ կը բնակի աստուածային բնութեան ամբողջ լիութիւնը: Եւ դուք ձեր կեանքին լիութիւնը գտաք միանալով անոր, որ գլուխն է ոգեղէն աշխարհի բոլոր իշխանութիւններուն ու պետութիւններուն: Հաւատքի ճամբով, երբ Քրիստոսի միացաք դուք ձեր մեղքերը թօթափեցիք եւ Քրիստոսի թլփատութեամբ ստացաք արտի թլփատութիւնը: Սկրտուելով՝ անոր հետ միասին թաղուեցաք եւ անոր հետ ալ յարութիւն առիք, քանի հաւատացիք Աստուծոյ զօրութեան, որ զայն մեռելներէն յարուցանեց: Քրիստոսի հետ Աստուած ձե՛զ ալ կենդանացուց, քանի դուք հոգեւորապէս մեռած էիք ձեր մեղքերուն պատճառով, որովհետեւ անթլփատ հեթանոսներ էիք: Այո՛, Աստուած ներեց մեր բոլոր յանցանքները եւ իր իշխանութեամբ ջնջեց մեր օրինազանցութեան համար մեզի դէմ արձակուած դատապարտութեան վճիռը, զայն խաչափայտին գամելով: Այսպիսով անիկա զինաթափ ըրաւ ոգեղէն աշխարհի իշխանութիւններն ու պետութիւնները, յայտնապէս խայտառակելով ու պարտութեան մատնելով զանոնք Քրիստոսի ձեռքով, անոր յարութեան ատեն:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ

Տէրունական խրատին հետեւելով, որ պարգեւատր եւ բազմառատ բարերարութեան համաձայն բոլորին կու տայ եւ ոչ ոք կը գրկէ, ինչպէս որ ըսաւ՝ «Խնդրողը պիտի ստանայ, փնտռողը պիտի գտնէ» (Մտք. 7.8), որ նաեւ իմանալին իբրեւ գիտութեան հաց եւ իմաստութեան գինի գեղեցկապէս մատակարարեց անոր քաղցը ունեցող բանական անձերուն, եւ քարոզիչներու բարձրաձայն հրաւերով հոգեւոր խրախճանքի կոչեց՝ առակողին համաձայն, մեզի ալ նոյնը իբրեւ օրէնք տուաւ ըսելով՝ «Եթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՝ տո՛ւր» (Մտք.5.42):

Եթէ լաւ է կարօտեալներուն մարմնական պէտքերը հոգալ, որուն փոխարէն խոստացաւ աշխարհի սկիզբէն պատրաստուած արքայութիւնը տալ, որքան աւելի գովելի է լիացնել բարիքներէ աղքատ հոգիները: Այնքան աւելի, որքան նախապատիւ, մեծ եւ պատուական է հոգին՝ քան մարմինը, պատկեր ըլլալով աստուածայինին, մինչ մարմինը երկրորդական եւ հողանիւթ է, գոր Տէրն ալ գործով յայտնեց, որովհետեւ, գրուած է, թէ Իրէն հետեւող ժողովուրդը միայն երկու անգամ հացով կերակրեց, բայց կենարար խօսքին վարդապետութեամբ, որ հոգիներու կերակուրն է, համաձայն այն խօսքին՝ «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով» (Բ. Յր. 8.3) միշտ անոնց հոգիները կը կերակրէր: Նաեւ իմաստուն ծառային առակով պատփրեց ճիշդ ժամանակին տալ ծառայակիցներուն կերակուրը. եւ դեռ, կրկնապատիկ քանքարներ շահողին եւ զլացողին օրինակով նոյնը ցոյց տուաւ՝ թէ պէտք է տալ ամէն անոր, որ կը խնդրէ (Մտք. 24.45-51):

ՀՐԱԺԱՐԻՄՔ

Ի՞նչ է «Հրաժարիմք»-ը: Հաւատացեալներ գիտեն, թէ Մեծ Պահոց շրջանին, Արեւագալի ժամերգութեան ատեն, ինչպէս նաեւ մկրտութեան խորհրդակատարութեան ատեն բոլորն ալ դէպի արեւմուտք կը դառնան եւ երեք անգամ «հրաժարիմք»-ը կ'արտասանուի:

«Հրաժարիմք»-ը կը հրաժարիմք բային գրաբար ձեւն է:

«Հրաժարիմք»-ը արտասանելով կը մերժենք, կը հեռանանք եւ կը հրաժարիմք սատանայի բոլոր տեսակի խաբէութիւններէն, մտածումներէն, պատրանքներէն եւ սատանայի բոլոր տեսակի գործակիցներէն:

«Հրաժարիմք»-ի ատեն արեւմուտք կը դառնանք, որ հակառակ կողմն է արեւելին: Եկեղեցականօրէն արեւելք կը խորհրդանշէ Աստուծոյ ուղղութիւնը: Աստուծոյ Գահը կը գտնուի արեւելք, անոր համար մեր եկեղեցւոյ բոլոր խորանները կը նային դէպի արեւելք: Արեւելքը կը խորհրդանշէ լոյսը, Աստուծոյ գիտութիւնը: Արեւմուտքն ալ Աստուծոյ հակառակ ուղղութիւնն է:

ՀՐԱԺԱՐՈՒՄ

Կը հրաժարիմք Աստանայէն եւ անոր բոլոր տեսակի խաբէութիւններէն, անոր պատրանքներէն, խորհուրդներէն, քանքարներէն, անոր չար կամքէն, անոր չար հրեշտակներէն, չար գործակիցներէն, անոր չար կեանքը կատարողներէն, եւ անոր ամբողջ չար գործութենէն, ամբողջութեամբ կը հրաժարիմք:

ՕՐԹԻ ԳԻՐՔԷՆ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Քրիստոսի անունին, այսինքն՝ Յիսուս անունը դրուելու յիշատակութիւնն է: Յիսուս կը թարգմանուի Փրկիչ, ինչպէս հրեշտակին կողմէ դնել հրամայուած էր Մարիամու Աւետման ատեն (Ղուկ. Ա.31) եւ ինչպէս իրօք ալ դրուեցաւ ծնելուն Ը. օրը թրփատութեան արարողութեան առթիւ (Ղուկ. Բ. 21), Հրէական օրէնքին համեմատ: Անուանակոչութիւնը, իբր առանձին տօն նշանակուած չէ Տօնացոյցին մէջ, այլ նոր օրացոյցները ստվորութիւն ըրին այսպէս նշանակել Ծննդեան Ը. օրը, Յունուար 13-ին, փոփոխելով Տօնացոյցին նշանակած թրփատութեան տօնը: Յիսուս անունը գործածուած է ստվորաբար Աւետարանին մէջ, բայց այժմ աւելի գործածական է Քրիստոս անունը, որ է Մեսիա՝ Օծեալ: Աւետարանին մէջ Քրիստոսի տրուած է նաեւ էմմանուէլ անունը (Մտթ. Ա. 23), հետեւելով Եսայեայ մարգարէութեան (Եսայ. Է. 14)

ԱՌԱԿ ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սիրտերը:

Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն հետ:

ԶԳԱՍ, ԿԱՐԴԱ՛Վ 3ով. 14.15-31

Եթէ կը սիրէք զիս, պիտի գործադրէք իմ պատուիրաններս: Եւ եւ Հօրս պիտի աղաչեմ, որ ուրիշ միտքարիչ մը տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ ըլլայ: Անիկա Սուրբ Հոգին է, որ ճշմարտութիւնը կը յայտնէ: Աշխարհը չի կրնար գայն ընդունիլ, որովհետեւ ո՛չ կը տեսնէ եւ ո՛չ ալ կը քանչնայ գայն: Բայց դուք կը քանչնաք գայն, որովհետեւ ձեր մէջ պիտի մնայ եւ ձեր հետ պիտի ըլլայ:

Որք պիտի չձգեմ ձեզ. կրկին պիտի գամ ձեզի: Մօտ ատենէն այլեւս աշխարհը զիս պիտի չտեսնէ, բայց դուք պիտի տեսնէք զիս, որովհետեւ եւ կ'ապրիմ եւ դուք ալ պիտի ապրիք: Այն օրը դուք պիտի գիտնաք, թէ եւ Հօրս մէջ եմ, դուք՝ իմ մէջս եւ ես՝ ձեր մէջ: Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք ա՛ն է, որ զիս կը սիրէ: Եւ հայրս պիտի սիրէ զիս սիրողը: Ես ալ պիտի սիրեմ զայն եւ ինքզինքս յայտնեմ անոր:

Յուդան, ոչ իսկարիտացի, ըսաւ իրեն.

- Տէ՛ր, ի՞նչպէս կ'ըլլայ, որ ինքզինքդ մեզի պիտի յայտնես եւ ոչ թէ աշխարհին:

Յիսուս պատասխանեց անոր.

- Ով որ կը սիրէ զիս՝ խօսքերս կը գործադրէ: Հայրս ալ պիտի սիրէ զայն եւ ես ու հայրս անոր պիտի գամք եւ անոր հետ բնակինք: Եւ ով որ չի սիրեր զիս՝ խօսքերս չի գործադրեր: Այս ըսածներս որ լսեցիք իմ խօսքերս չեն, այլ՝ խօսքերը Հօրս, որ զիս որկեց: Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Միտքարիչը՝ Սուրբ Հոգին, որ հայրս ձեզի պիտի որկէ իմ անունովս, անիկա ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի... Շարունակել կարդալ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԷՆ: